

Հայ գրականության հանրապետական օլիմպիադայի հարցաշարեր

XI դասարան

(տևողությունը՝ 180 րոպե)

1. Ներկայացրո՛ւ քո առաջին հանդիպումը Թումանյանի հետ (հեքիաթ, մանկական բանաստեղծություն, բալլադ): Նկարագրի՛ր Անուշին՝ Թումանյանի բնութագրամբ. ինչո՞ւ կործանվեց նրա եթերային գեղեցիկ սերը:

5մ.

2. Գրի՛ր Բասիակյանին բնութագրող շրջասույթը. ո՞վ է շրջասույթի հեղինակը: Աբու – Լալա Մահարու կերպարի նախատիպը: Բացատրի՛ր մերժելով հաստատելու մահարիական փիլիսոփայությունը: Ցանկալի է նշել պոեմի նախահիմքերը:

5մ.

3. Ո՞վ է մեր գրականության գրական ֆիդային: Ինչո՞ւ է այդպես բնութագրվում:

Ո՞ր ստեղծագործության հերոսներն են Բակուր նահապետը, Տրդատ իշխանը և պարուհի Նազենիկը: Խոսի՛ր այդ երկի մասին:

5մ.

4. Ատոմ Յարճանյան. ո՞վ է նրան կնքել գրական այդ կեղծանունով: Վերլուծի՛ր «Պարը» բանաստեղծությունը՝ արձագանքելով մերօրյա իրականությանը:

5մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան